



Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն



ԱՋՄԱՎԵՊՆ երկրորդ անգամ իրեն սահմանած եռամեայ ընթացքն կատարելով, պիտի սկսանի երրորդ շրջան մ'ալ նոյն չափով. դարձեալ ասանկ չափ մը սահմանելուս պատճառն՝ նոյն է ինչ որ առջի յայտարարութեանց մէջ իմացուցեր ենք. իր նիւթական չափն ալ նոյնպէս մնալով՝ ընկերագրութեան պայմաններն ալ նոյն կը մնան :

Ընթին կամ ուճոյն մէջ ալ՝ երեւելի փոփոխութիւն մը ընելու միտք չունինք հիմայ . բայց այն սկզբունքն որ միշտ ունեցեր ենք և ունինք, որ ըստ կարելոյն հաճոյագոյն ընենք ()րագիրնիս, երբ ալ որ մեզի հարկաւոր ցուցնէ փոփոխութի մը կամ նոր կերպ մը մտցընելու, առանց իսկ որոշուած ժամանակին ալ սպասելու՝ ձեռք զարնել կուտայ օգտակար փոփոխութեան :

Սիայն թէ հաճոյագոյն ընեն՝ պարզապէս մեր կարծիքէն կամ ճանաչմանէն չենք առնուր, հապա ազգերնուս՝ մանաւանդ թէ մեր կարդացողաց բազմութեան ախորժակէն . և ասով է որ կը ջանանք՝ ամենուն չէ՛նէ՛ գոնէ բազմաց հաճոյ ընել մեր աշխատանքն, ամէն անգամ ալ չէ՛նէ՛ գոնէ շատ անգամ : ()այտնի է, և աս ()րագրիս միջոցով ալ լաւ փորձեցինք, որ ամէն մարդ զանազան կարծիք, զանազան ախորժակ ունի, որով ոչ դժ կրնայ աս ()րագիրս (ահամայ պակսութիւններն ալ

(Թողլով) կատարեալ իրեն քմացն յարմար գտնել. բայց այնպէս չգտնելուն համար ալ իրաւունք չունենար տհաճելու և արհամարհելու. վասն զի ինչպէս որ (Նազմավէպը միայն իրեն համար գրուած չէ, այսպէս ինքն ալ միայն իրեն համար պիտի չառնու :

Եւ կէց կ'իմացուի որ (Նազմավէպին ոճն ալ քիչ շատ նոյն պահելնուս պատճառն այն է որ դարձեալ նոյն վիճակի կարդացողաց կ'ընծայուի. թէ որ դաս մը իմաստասէր, հմուտ, լեզուագէտ, դպրոցաց մէջ վարժած կամ վարժող անձանց համար գրուած ըլլար (Նազմավէպն, 'ի հարկէ այս կերպով չէր գրուէր. թէպէտ չենք ալ կրնար կարծել, թէ (Նազմավիպին զանազանութեանցը մէջ կատարեալ ուսումնասէր և ազգասէր անձ մը՝ ամենեւին իր մտքին որոճ մը կամ նոր բան մը չկարենայ գտնել, թէ որ իր միտքն ալ ժողովրդեան մտքէն վեր գերազոյն նիւթէ մը զանգուած չէ : (Բայց մեր ()րագրին ընդհանուր կարդացողք՝ կը տեսնենք որ երկու դաս կամ երկու ախորժակ կը բաժնուին. ոմանք աւելի արուեստական, ուսումնական և տնտեսական բաներ կ'ուզեն. մեր փափագն ալ է զանոնք գոհ ընել. ոմանք ալ՝ թէպէտ և այդպիսի նիւթոց օգուտն ալ ճանչնան, բայց իրենց վիճակէն կամ իրենց մտաց կարողութենէն ամենեւին դուրս գտնելով՝ 'ի հարկէ համէն առնուր, և աւելի պարզ գիտելիքներ, զուարճալի բաներ, պատմական, աշխարհագրական և պարզ բանասիրական բաներ կ'ուզեն. պէտք է որ զասոնք ալ գոհ ընենք : (Կարդացողաց մեծ խումբ մ'ալ հիմայ նոր ազգասէրք և դպրութեանց ճաշակաւութեան, ինչպէս են ազգային դպրոցաց մէջ վարժողք. ասոնք կամ բոլորովին դպրութեանց տուած են իրենց ախորժակնին, կամ աւելի արուեստականաց. առջիններուն համար՝ արուեստական նիւթերը բանի չեն գար, երկրորդ դասին համար ալ՝ քիչ են. ուրեմն առջինները աւելի կ'ախորժին բանասիրական, ազգային տեղեկութեան, գեղեցիկ դպրութեանց բաներ կարդալ, երկրորդներն ալ որ այն բաներուն ճաշակն առած են, թէպէտ և ուրիշ բանի կը հետեւին, միշտ յօժարութեամբ կը կարդան զանոնք : (Իրաւ օգուտն զուարճութենէ վեր կը դնենք և կ'ուզենք դնել տալ, բայց օգտակարէն զուարճութիւն առնուլ և

զուարճութենէն օգուտ քաղելն ալ աւելի լաւ ճամբայ կը սեպենք՝ քանի որ դեռ ազգերնիս աս վիճակին մէջ է : Ուրեմն մեր կարդացողք հիմկուհիմայ նոյնչափ իրաւամբ արուեստական բաներ կ'ուզեն , որչափ որ բանասիրական . մենք ալ կը ջանանք երկուքէն ալ հաւասար մատակարարել . երբոր տեսնենք որ անոնց կշռոյ թաթերը զանազանին , մենք ալ կշռոյքը կը զանազանենք : Իսկ բարոյականն կամ դաստիարականն որ ազգերնուս կըթուլեան հիմն կը սեպենք , ամենևին ձեռքէ չենք թողուր . մանաւանդ որ աս տեսակ գրուածներն՝ ամէն դասի մարի ալ յարմար և հասկանալի է :

Ուէ որ երբեմն գրաբառ հատուածներ ալ մտնեն ()րագրիս մէջ , յայտնի է որ բանասիրաց և մատենագրութեան պիտոյքը կը պահանջեն . չհասկըցողներն պէտք է զիջանին հասկըցողներուն բազմութեանը , որոնց երբեմն անհամեմատ զուարճութիւն կը պատճառեն այնպիսի գրուածք . և իրենք ալ թէ որ ընկերասէր անձանց բացատրել տան գրաբառ գրուածը՝ ահա բան չեն կորսնցըներ , իսկ հասկըցողներն մէկ մ'ալ աւելի կը շահին , որ է իրենց հայրենի հայկական լեզուին վսեմութիւնը վայելել :

Եւ որպէս զի չըլլայ որ երբեմն բոլոր թերթէ մը՝ մէկն ախորժելու կամ միտք պահելու բան չգտնէ , ամէն ամսու վերջին երեսը կ'աւելցընենք քանի մի մանր մունր գիտելիք , դիտելիք ու զուարճալիք . որոնց մէջ ազգային խնդիրներ ալ կ'առաջարկենք , երբեմն բանասիրաց խօսակցութեան և քննութեան առիթ տալու , երբեմն մեր իսկ հետաքրքրութեան և տարակուսին լուծմունք ուզելու գիտցողներէն . և անոնց կարծիքն և տեղեկութիւնն թէ որ իրենց ալ մեզի ալ սրտաշաճ երևնայ՝ կը հրատարակեմք սոյն օրագրովս :

Հուսամք որ դարձեալ մեր դիտմունքն և աշխատանքն ընդունելի ըլլայ բարեմիտ , ներող , ազգասէր , բանախնդիր և կարօտ անձանց , որոնց որ ԲԱԶՄԱՎԷՊ ()րագիրս կ'ընծայենք :

